ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**«---» նոյեմբերի** 2015**թ.** **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱՆԱՏՈԼԻ ՊԱՊՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

Տալ համաձայնություն ՀՀ ժողովրդական նկարիչ Անատոլի Պապյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կինյան փողոց հ.24 հասցեում փակցնելու համար։

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԱՆԱՏՈԼԻ ՊԱՊՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ժողովրդական նկարիչ Անատոլի Պապյանը ծնվել է 1924թ. նոյեմբերի 25-ին Երևանում: 1950թ. ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտը, 1951-1953 թթ. կատարելագործվել է Մոսկվայում:

1953թ. դասավանդել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում, 1962թ.՝ Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում:

1983թ. արժանացել է Հայաստանի ժողովրդական նկարչի կոչման: 1984թ. Անատոլի Պապյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Նրա աշխատանքներից հայտնի են «Մեղեդի» (1960թ.), «Մեսրոպ Մաշտոց» (1962թ.), «Առավոտ» (1978թ.), «Օջախ» (1983թ.), «Որդիները» (1965թ.), «Ռեքվիեմ ըստ Նարեկացու» (1987-2000թթ), «Գարուն ա, ձուն ա արել» (2000թ.), «Պար հին ծառերի տակ» (2000թ.), «Ռեքվիեմ ըստ Նարեկացու» (2003թ., եռապատկեր), «Առավոտ» (2004թ.), «Կեսօր» (2004թ.), «Երեկո» (2004թ.) կտավները: Անատոլի Պապյանն անհատական ցուցահանդեսներ է ունեցել Երևանում (1981թ., 1999թ., 2004թ.), Փասադենայում (2000թ.): Նրա աշխատանքները պահվում են Հայաստանի ազգային պատկերասրահում, Մոսկվայի արևելքի ժողովուրդների արվեստի պետական թանգարանում և այլուր:

Անատոլի Պապյանը մահացել է 2007թ. Երևանում:

ՀՀ ժողովրդական նկարիչ Անատոլի Պապյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կիևյան փողոց հ.24 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Հայաստանի նկարիչների միության նախագահ Կ. Աղամյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԱՆԱՏՈԼԻ ՊԱՊՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Անատոլի Պապյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԱՆԱՏՈԼԻ ՊԱՊՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Անատոլի Պապյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ